ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1978 թ. հունվար—դեկտեմբեր)

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Բուդապեշտում հիմնվել է հայկական թանգարան, որտեղ պահվում են նյութեր հունգահայերի պատմության վերաբերյալ։ Ըստ այդ նյութերի հայերը Հունգարիա են եկել XI—XII դդ. սկսած և լավ ընդունելության են արժանացել տեղացիների կողմից։

Թանգարանն ունի Սովետական Հայաստանին նվիրված առանձին բաժին։

«Շարժում», 25 մարտի 1978

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Կրետեի հայկական փոքրաթիվ գաղութը մարտի 7-ին կատարել է ապրիլյան եղեռնին նվիրված հուշարձանի բացումը։ Հուշարձանը կառուցվել է եկեղեցու գավիթում։

«Զարթոնք», 9 հունիսի 1978

ԴԱՆԻԱ

Կոպենհագենում բացվել է Հայաստանի արվեստի ցուցահանդես, ուր ներկայացված են մանկական նկարներ, գորգեր, արծաթե իրեր, ինչպես նաև կիրառական արվեստի բազմաթիվ գործեր։

«Նոր կյանք», 3 փետրվարի 1978

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Ժնևում և Լոզանում հայերի թիվը 1000-ի է հասնում։ Մյուս քաղաքներում ապրում են մոտ 600 հայեր։ Ժնևում գործում է հայ կանանց միությունը։ Լոզանում է գտնվում Հ. Բ. Ը. Միության կենտրոնական գրասենյակը։

«Պայքար», 17 փետրվարի

Ինչպես հայտնում է «Զարթոնքը», Լոզանի և Փարիզի «Արվեստների գրադարան» մատենաշարով լույս է տեսել էլիզաբեթ Բաուերի «Հայաստան» խորագրով 180 էջից բաղկացած ուսումնասիրությունը, որի վերաբերյալ Առնոլտ Քոլերը գրախոսություն է տպագրել Ժնևում լույս տեսնող գրական շաբաթաթերթում։ Այդ գրախոսությունը թարգմանաբար տպագրվել է «Զարթոնքում»։

Հատորն ունի հայկական ճարտարապետական ու պատմական հուշարձանները, հնագիտական առարկաները, Հայաստանի բնությունն ու ժողովրդի կյանքը պատկերող բազմաթիվ լուսանկարներ, որոնց մեծ մասը կատարել է Հայաստան այցելած ճանապարհորդ-լուսանկարիչ շվեյցարացի Ժարոպ Շմիտհեյնը։

Գիրքն ունի ժամանակագրական, անձնանունների և տեղանունների ցանկեր, ինչպես նաև քարտեզներ։

«Զարթոնք», 9 մարտի, 22 հունիսի 1978

Շվեյցարահայ ճարտարապետ Սարգիս Ճեվահիրճյանը ֆրանսերեն լույս է ընծայել «Վերհիշումներ հայ ճարտարապետութենեն Արևմուտքի մեջ» աշխատությունը, որը մինչ այդ հայերեն լույս է տեսել «Բազմավեպում»։

«Զարթոնք», 20 ապրիլի 1978

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Լիսաբոնում, Գալուստ Կյուլպենկյան հաստատության կենտրոնի սրահում վերջերս բացվել է սովետահայ 30 նկարիչների նկարների ցուցահանդես, ուր ներկայացված են 100-ից ավելի բնանկարներ, դիմանկարներ և այլն։ Ցուցահանդեսին նվիրված հոդվածում տեղի «Տիարու» թերթը ի միջի այլոց, գրել է, որ այդ ցուցահանդեսը կնպաստի երկու երկրների մշակութային կապերի զարգացմանը և պորտուգալացիներին հնարավորություն կտա ավելի մոտիկից ծանոթանալու հայկական արվեստին։

«Նոր կյանք», 17 նոյեմբերի 1978

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Օգոստոսի 18-ին Բուենոս-Այրեսում տեղի է ունեցել գեղարվեստական երեկո նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 75-ամյակին։ Երեկոն կազմակերպել է Հ. Բ. Ը. Միության մշակութային հանձնախումբը։ Անվանի երաժշտի մասին ելույթ է ունեցել երաժշտական քննադատ Նապոլեոն Գապրերան։

«Շարժում», 26 օգոստոսի 1978

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզի «Ֆլամարիոն» հրատարակչությունը լույս է ընծայել Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Հայկական արվեստը իր ծագումից մինչև XVII դար» նոր աշխատանքը։ «Լը Մոնդում» լույս է տեսել հոդված այդ գրքի մասին։

«Զարթոնք». 19 մարտի 1978

Ֆրանսիական «Նուվել լիթերեր» թերթը իր փետրվարի 8—16-ի համարում մի էջ է նվիրել հայերին, որտեղ խոսում է Սայաթ-Նովայի բանաստեղծությունների, Սիրարփի Տեր-Ներսեսյանի և մի շարք այլ գրողների ու գիտնականների գործերի մասին։

«Զարթոնք», 17 մայիսի 1978

Փարիզի Փլեյել համերգասրահում պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդիի, Վիլյամ Սարոյանի և Կոմիտասի սան, երաժշտագետ Վարդան Սարգսյանի նախագահությամբ տեղի է ունեցել երեկո, որտեղ լսել են Արմենուհի Գևոնյանի հավաքած ժողովրդական երգերը։ Տարիներ շարունակ նա շրջել է հայաշատ գաղթօջախները և ժողովել է սիրո, հարսանեկան, գեղջկական, աշխատանքային ու պանդխտության երգեր։ Նրա ջանքերով Տարոնի ժողովրդական շատ երգեր փրկվել են կորուստից և ձայնագրվել են։ Արմենուհի Գևոնյանը այդ երգերի կատարումով հանդես է եկել ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում, ինչպես նաև Ստամբուլում, Բեյրութում, Փարիզում և Երևանում։

«Շարժում», 27 մայիսի 1978

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի «Թայմս» օրաթերթի գրական հավելվածի հունվարի 13-ի համարում պրոֆ. Դեյվիդ Մարշալ Լենգը գրախոսական է տպագրել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անգլերեն թարգմանության մասին (թարգմանությունը Միշա Գյուտյանի)։ «Պայքար» թերթում լույս է տեսել Լենգի այդ գրախոսության հայերեն թարգմանությունը։

«Պայքար», 3 մարտի 1978

Լոնդոնում բացվել է Հայ երաժշտական ինստիտուտ, հայտնի կոմպոզիտոր ու խմբավար Լորիս Ճգնավորյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ։ Ինստիտուտի պաշտոնական բացումը կատարել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա. օտարերկրյա հյուրերի և անգլիական մամուլի ու հեռուստատեսության ներկայացուցիչների մասնակցությամբ։

Ինստիտուտի նպատակն է տարածել համաշխարհային երաժշտության գլուխգործոցները, ուսումնասիրել հայ երաժշտությունը և տարածել հայ ու օտար շրջաններում, կազմակերպել հայկական երաժշտության փառատոներ, համաշխարհային երաժշտասեր հասարակայնությանը ծանոթացնել հայկական միջնադարյան երաժշտությանը։

«Երևան». 28 հուլիսի 1978

Լոնդոնի Բրիտանական գրադարանը հրատարակության է պատրաստել Վ. Ներսիսյանի «Հայկական հազվագյուտ գրքերի ցանկ» (1512—1850) մատենագիտությունը, որում բերված են Բրիտանական գրադարանում պահվող հայկական գրքերի և XVI—XVII դդ. Արևմուտքում հրատարակված հայերեն գրքերի ցուցակները, ինչպես նաև Բրիտանական գրադարանի հայկական քարտեզների ցանկը։

«Պայքար». 29 հուլիսի
«Լրաբեր», 12 օգոստոսի 1978

ԱՄՆ

«Նեշընալ Ջեոգրաֆիք» ամսաթերթի 1978 թ. հունիսի համարում լույս է տեսել Ռոբերտ Պոլ Ջորդոնի «Հպարտ հայերը» վերնագրով ընդարձակ հոդվածը հայերի մասին, որը գրավում է ամսաթերթի 27 էջերը։ Հոդվածում տպագրված են 31 գունավոր լուսանկարներ։

«Նոր օր», «Պայքար», «Արև» թերթերում շարունակաբար հրապարակված է այդ հոդվածի հայերեն թարգմանությունը։

«Նոր օր», 9 հունիսի
«Պայքար», 9 օգոստոսի
«Արև», 6 սեպտեմբերի 1978

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ